ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝

ՀՀ Արարատի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. << **Արևշատի ԱԱՊԿ** >> **ՊՈԱԿ-ի տնօրեն**

2. << **Այգեզարդի ԱԱՊԿ** >> **ՊՈԱԿ-ի տնօրեն**

3. << **Նոյակերտի ԱԱՊԿ** >> **ՊՈԱԿ-ի տնօրեն**

4 . << **Քաղցրաշենի ԱԱՊԿ** >> **ՊՈԱԿ-ի տնօրեն**

5. << **Հովտաշատի ԱԱՊԿ**>> **ՊՈԱԿ-ի տնօրեն**

Տնօրենի ընտրության (նշանակման) պարտադիր պայմաններն են՝

1) բարձրագույն բժշկական կրթություն և հետբուհական կրթություն ներքին հիվանդություններ (թերապիա), կամ մանկաբուժություն կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ,
2) առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 2 տարվա ստաժ,
3) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր),
4) կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն,
5) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝
ա. ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման,
բ. անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման,
գ. աշխատանքների բաշխման,
դ. կարգապահական պատասխանատվության,
ե. խրախուսանքի միջոցների կիրառման,
6) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
7) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ներառյալ ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ,

8) բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում
9) առողջապահական պետական ոչ առևտրային կազմակեչպությունների տնօրենների դեպքում՝ չի լլրացել թեկնածուի 65 տարին

Լրացուցիչ պայմաններն են՝
1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
2) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
3) օտար լեզվի իմացություն

Մրցույթը կկայանա 2020 թվականի ապրիլի 3–ին՝

1. << **Արևշատի ԱԱՊԿ** >> **ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 11:00 -ին:**
2. << **Այգեզարդի ԱԱՊԿ** >> **ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 14:00 -ին:**

Մրցույթը կկայանա 2020 թվականի ապրիլի 7–ին ՝

1. << **Նոյակերտի ԱԱՊԿ** >> **ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 10:00 -ին:**
2. <<<**Քաղցրաշենի ԱԱՊԿ**>> **ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 14:00 -ին:**
3. << **Հովտաշատի ԱԱՊԿ**>> **ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 16:00**

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Արարատի մարզպետարան են ներկայացնում՝

1) դիմում.
2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.
3) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.
4) ինքնակենսագրություն.
5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
6) քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.
7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).
8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

9.Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9^{00} -17^{00} -ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020 թվականի մարտի 3 –ը:

Մրցույթը կկայանա Արարատի մարզպետարանի շենքում (ք.Արտաշատ , Օգոստոսի 23/60): Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արարատի մարզպետարան (ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60, անձնակազմի կառավարման բաժին, հեռ.0235 2-45-11):